Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ - 2023
8–րդ դասարան - 120 բոպե

N 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 x 4 = 2 միավոր)

1. Որտե՞ղ բնակություն հաստատեցին Նոյի որդիները ջրհեղեղից հետո. *(0,5 միավոր)*
1) Բաբելոն
2) Նախիջևան
3) Միջագետք
4) Քանան

2. Ի՞նչ ազգի ներկայացուցիչ էր Ս. Սարգիս զորավարը. *(0,5 միավոր)*
1) Հայ
2) Հռոմեացի
3) Հրեա
4) Հույն

3. Ե՞րբ է գումարվել Շահապիվանի ժողովը. *(0,5 միավոր)*
1) 434 թ.
2) 454 թ.
3) 444 թ.
4) 464 թ.

4. Ո՞ր կաթողիկոսն է ձեռնարկել Անիում Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու շինությունը. *(0,5 միավոր)*
1) Սարգիս Ա. Սևանցի
2) Խաչիկ Ա. Արշարունի
3) Պետրոս Ա. Գետադարձ
4) Անանիա Ա. Մոկացի

N 5-9
Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 x 5 = 5 միավոր)

5. Հովսեփը _____ էր, և Հիսուս օգնում էր նրան այդ աշխատանքում: *(1 միավոր)*

6. Հայոց Եկեղեցում Վարագա Ս. Խաչի տոնը նշվում է _____ մերձակա կիրակի օրը: *(1 միավոր)*

7. Ս. Թադեոս առաքյալի նահատակությունից հետո Ս. Ոսկյանք առանձնացել են _____ լեռներում և ճգնակյաց կյանք վարել: *(1 միավոր)*

8. Մաշտոց կաթողիկոսը հռչակված էր իր գիտելիքներով: Նրա անվան հետ է կապվում Հայոց Եկեղեցու «_____» ծիսական ժողովածուի ամբողջացումը: *(1 միավոր)*

9. 9-րդ դարում Սյունյաց Մարիամ իշխանուհու նվիրատվությամբ Սևանի կղզում կառուցվեցին Ս. Առաքելոց և _____ եկեղեցիները, որոնք կանգուն են մինչև օրս: *(1 միավոր)*

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 4-5 փաստից

(1 x 2= 2 միավոր)

10. Կատարել համապատասխանեցում. *(1 միավոր)*

1. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողով	ա. Ս. Ներսես Մեծ	1	
2. Աշտիշատի ժողով	բ. Բաբկեն Ա.	2	
3. Շահապիվանի ժողով	գ. Ներսես Բ.	3	
4. Դվինի առաջին ժողով	դ. Գրիգոր Դ. Տղա	4	
	ե. Ս. Հովսեփ		

Հողոցմեցի

11. Իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին. *(1 միավոր)*

1. Շիրակավանի ժողով	ա. 1042 թ.	1	
2. Բաղդադի խալիֆի Աշոտ Բագրատունուն թագ ուղղարկելը	բ. 1019 թ.	2	
3. Կաթողիկոսական աթոռի Աղթամար տեղափոխումը	գ. 1071 թ.	3	
4. Պետրոս Ա. Գետադարձի կաթողիկոս օծումը	դ. 855 թ.	4	
5. Գագիկ II-ի թագավոր օծումը	ե. 927 թ.	5	
	զ. 885 թ.		

N 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

(1 x 4= 4 միավոր)

12. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. *(2 միավոր)*

«Բայց ավելի մեծ էր այն բացասական դերը, որ կատարեց ….. ժողովն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Նրա ընդունած երկաբնակ աստվածաբանական որոշումը մեծ խառնակություններ առաջացրեց Երուսաղեմում, Ալեքսանդրիայում և Անտիոքում: Երուսաղեմում ծագեց ապստամբություն, որի ղեկավարները պնդում էին, թե ժողովը նեստորականության վարդապետությունն է ընդունել»:

1. Ո՞ր ժողովի մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

13. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. *(2 միավոր)*

«…… կաթողիկոսը գնում է տեսնելու Շեխի որդի Հիսեին (Իսա իբն Շայխ), և նրա կողմից մեծ պատվի է արժանանում. վերջինս նրան տալիս է շատ պարգևներ, նաև դրոշակ՝ վրան խաչ դնելու և դրանով միշտ իր մոտ մտնելու համար»:

1. Ո՞ր կաթողիկոսի մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդը: *(0,5 միավոր)*

Խաչ, Նարոտ, Քշոց, Սրբիչ, Մյուռոն:

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Հերա, Արես, Աթենաս, Վեղա, Հեփեստոս:

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Նորավանք, Այրիվանք, Գոշավանք:
բ. Այրիվանք, Հոռոմոսի վանք, Նարեկավանք
գ. Գոշավանք, Նորավանք, Ցախաց Քար վանք

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Գյուտ Ա., Սմբատ Բ., Անանիա Ա.
բ. Կոմիտաս Ա., Մովսես Ա., Պետրոս Ա.
գ. Զաքարիա Ա., Խաչիկ Ա., Հեթում Բ.

N 16

1. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) Անապատում Հիսուս 50 օր ոչինչ չկերավ և քաղց զգաց:
2) Երրորդ փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ միայն Աստծուն պետք է երկրպագել:
3) Սատանայի՝ Հիսուսին մոլորեցնելու բոլոր չորս փորձերը ձախողվեցին:
4) Առաջին փորձության ժամանակ Հիսուս սատանային ասաց, որ Աստծուն փորձել չի կարելի:
5) Անապատում Հիսուս անընդհատ աղոթում էր և մտածում մարդկանց փրկության մասին:

2. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) 963 թ. կաթողիկոս է ձեռնադրվում Անանիա Ա. Մոկացու ազգական Խաչիկ Ա.-ն:
2) Անանիա Ա. Մոկացին վերականգնում է նաև բնականոն հարաբերություններն Աղվանից կաթողիկոսության հետ:
3) Մահմեդականության դեմ մղվող պայքարում Կիլիկյան Հայաստանն օգնության համար հաճախ դիմում էր Հռոմի պապին:

4) 1203 թ. Գրիգոր Զ. Ապիրատի մահով ավարտվեց Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը:
5) Գող Վասիլի իշխանության քայքայումը ստիպում է Գրիգոր Գ.-ին հայրապետական աթոռը տեղափոխել Հռոմկլա, որտեղ այն մնում է 43 տարի:

N 17
Շարադրանք
(1 x 2 =2 միավոր)

ա. Ներկայացրե՛ք Հայաստանի հոգևոր-մշակութային վերելքը X դարում:
բ. Գրե՛ք Հիսուս Քրիստոսի թաղման և հարության մասին: